



Ա Բ Ա Բ Ա Տ Տ

ԹԻՒԶ. — ԵՐԶԱՆ ԺԴ.

1881

ՏԱՐԻ ԺԴ. ՅՈՒՆԻՍ 30.

ՈՒՐԻՇԻ ՈՒՆԵՑԱԾԻ ՎԵՐԱՅ ԱՉՔ ԶԴՆԵԼ, ԹՈՂ Թէ ԿՊՉԵԼ:

Եշխարչիս մէջ պատահած վատ գործերից, որ մարդիկ անումն և այդպիսի արարմունքովն իրանց սիրտը արատաւորում են ու կեղտոտում, ամենավատն, ամենազգուելին գողութիւնն է, որ ամեն մարդի աչքի ամենաբն լաւ չէ երեսում՝ որ ամենի սիրտը վրդովում է, որ ամենի բերանը շատ վատ է բաց անել տալի վրան առանց քաշուելու կամ ծածկելու։ Այս վատ արարմունքով կարող են իրանց կեղտոտել միայն այն մարդիկը, որ ոչ պատիւ դիտեն, ոչ հաւատարմութիւն, և ոչ հաւատայն մարդիկը միայն, որ իրաւունք ու պարտականութիւն ասած բանի զգացումից զուրկ են։

Մեծ նշանակութիւն ունի աշխարչիս ամեն ազգերի մէջ բարի աչքով նայելը ուրիշի ունեցած չունեցածի վրայ, ու յարգել ուրիշի ինչքը՝ պարտականութիւն են համարում իրանց համար։ Միայն վայրենի ազգերը, որ ուղղուած վարք ու բարք չունին, որ կրթութիւնից հեռու են, որով յափշտակող անբան կենդանիների ցեղին աւելի մօտիկ են, քան թէ բանաւոր ու կրթուած մարդկային ազգին, նոքա սովոր են միայն ուրիշների ունեցածի վրայ այն աչքով նայել, որ ձեռներից խլեն, յափշտակեն ու տէր գառնան, առանց խղճահարուելու, առանց մտածելու թէ, ինչ որ ունին ուրիշները, ի՞նչքան խելք ու միտք են մաշել, որ ձեռք են բերել, ի՞նչքան անհանգիստ եղել, ի՞նչքան անքուն գիշերներ անց կացրել, ի՞նչքան ջանք, աշխատութիւն ու քրտինք են թափել մինչև որ

կարողացել են այն տեղը հասցնել, որ բանի տէր դառնան. ուրիշն պէտքէ պատռւեն այնպիսի մարդիկներին՝ որովէս և նոցա ունեցածը որ ինքն իրան կամ հեշտութիւնով նոցա ձեռքը չէ եկել. բայց րիբաւ անտաշ ու վայրենի ազգին այդպիսի մտածմունք ու զգացմունք չունին, որ խղճմարանք և ունենային. նոքա այն են միայն մտածում մէկ, երբ որ իրանք որ եիցէ բան չունին ու կարող են ունենալ հեշտութիւնով, ու ձեռքներիցը կպայ, ինչու համար չունենան, այդ պատճառով զազութիւնը նոցա մէջ օրինաւոր վաստակ է համարվում:

Բայց այդպիսի բարբարոսները, երբ որ իրանց անտաշ ու անզարդացած աստիճանից բարձրանումեն, երբ որ իւրեանց առաջուայ թափառական կեանքը թողնելով՝ բարեկարգ տէրութիւնների մէջ են սկսում բնակուել, հաստատուն բնակութիւններ են ունենում, և զիւղական և մանաւանդ քաղաքական բնակիչների պէս են սկսում ապրել, նոցա արած գործերով, նոցա բանեցրած արհեստներով պարապում: այն ժամանակ սկսումն ամաշել իւրեանց առաջուայ տրած գործերից. կարմրումեն, երբ որ մոքներիցն անց է կենում, որ ուրիշի ունեցածը, տարիներով ու ծանր աշխատութիւնով ուրիշի հաւաքածը ոյժով կամ խորամանկութիւն բանեցնելով, ինչպէս յառաջ իրանք անումէին, ձեռք ձգեն, տիրոջ ձեռքից հանեն կամ յափշակելով, կամ կողապտելով, կամ խարդախութիւնով:

Այսպիսի վատ գործերն ու այսպիսի գործքի տէր մարդիկը պատճառ եղան, որ զուրս եկան աշխարհիս ամեն կարգերն ու կանոններն, ամեն թագաւորներն, ամեն օրէնքներն ու ամեն գաշնակցութիւնները, որ այդպիսի գործերի առաջն առնեն և ամեն մի մարդ իւր ունեցածի տէրը կարողանայ լինել, կամ վայելել, ապահով լինելով ու կասկած չտանելով կամ չվախենալով, որ մի մարդ կարող է ու կհամարձակուի իւրացնել այն բանը, ինչ որ իւր ջանքի ու աշխատութեան պտուղը չէ: Ամենայն քաղաքական կարգադրութիւններ զիխաւորապէս նորա համար են, որ ամեն մի մարդի և իւր ունեցածին որպէս և ունեցած իրաւունքին պաշապանութիւն անեն:

Արենին, «վ որ ուրիշի ունեցածը իրան է սեպհականացնում, թէև ծածուկ կամ տակնահանց հնարքներ բանեցնելով, այնպիսի մարդը օրէնքի յայտնի թշնամի է և քաղաքական կարգի ու կանոնի խանգարիչ: Այդպիսի մարդին իւր քաղաքակիցներն առումեն և օրէնքը պատճում, որդար գատառանով զրկելով նորան իւր մարդկային պատէիցն ու իրաւունքներից: Երբեք անարդ ու անպիտան մարդ մարդավարի մարդիկների կարգում չէ ընդունվում, այլ զուրս է ձգվում իւր պատւաւոր ու օրինաւոր քաղաքակիցների միջից այլ ևս չիհամարձակուիլ նա երկար մնալ այն հասարակութեան մէջ, որ իւր չարագործութիւնիցն ապահով մինել չէ կարող: Այդպիսի մարդին իւրեանց միջից հեռացնում աքսորումն կամ բանատարկում, որովհետեւ անտանելի և անուղղելի չարագործ է:

Ավ որ իրան այլպիսի ամօթալի գործով կեղտուել է ուրիշի ունեցածին կազելով՝ այլ և չէ մոռացվում՝ հասարակութեան մէջ նորա վաս գործն ու անունը միշտ քաշքշվում։ Սորա համար է աշխարհումն տարածուած այն առածը թէ, ովք որ մի անգամ գոզութիւն է անում, անունը գող է զորս գալիս ու միշտ վրան մնում է . . . Այդ վաս զործից յիշայ գոզութիւն անող մարզը որքան էլ իրան պատով պահի, որքան էլ լու վարք ունենայ, իւր վրան կամած առաջուայ կեղտը չէ սրբվում։ Սորանից կարող ենք պարզ հասկանալ թէ, որքափ մէծ նշանակութիւն ունի մեր հոգին անարատ ու ազնիւ պահելլը և մեր կողմանէ պատուելն ուրիշ ունեցածը աչք չգնել մեզ նման մարզիկների ինչքի վրայ թող թէ կազել . այս միտքը մեր սրտի մէջ տպաւորուած պէտք է լինի միշտ որ ոչ մի ժամանակ մեզ անպատիւ չանենք, ինքներս մեր անունը չկոտրենք, ուրիշի թէ մի ոչինչ բանին միայն կազելով, որովհետեւ մեք իրաւամբ բոլոր սրտով ատում ենք ուրիշն, երբ որ նորա վրայ այլպիսի մի բան ենք տեսնում, կամ լսում։ Սորանից պարզ երեսումէ նոյնպէս, թէ մի մարզի, և մանաւանդ մի քրիստոնէի համար որքան անարժան բան է ուրիշի իրաւունքին, ուրիշի սեպհականութեան կազելը և թէ որքափ ուրին հետո պիտի պահի իրան այլպիսի մի մաքից, թող թէ գործից։

Եւ մի՞թէ հարկաւորութիւն կայ մի քրիստոնէի զգուշացնելու այն մարդութիւնից, այն յանցանքից, որ ամենից ցածն է ու զզուելին։ Մի՞թէ ժամանակիս երեխան անգամ չէ իմանում, թէ ինչն է ուրիշներ, ութէ՝ իրաւունք չունի ուրիշի բանին կազելու, Մի՞թէ ժամանակիս ամենից աւերած ու փչացած մարդն անգամ չէ իմանում, որ ուրիշ ունեցածի վրայ քաղցած գայլի աչքով պիտի չնայի յափշտակելու, խլելու, թոցնելու, փախցնելու մաքով, այլ ինչպէս որ ինքը կցանկանար, որ իւր ունեցածն իրան մնայ, ինքը վորեկի, ուրեմն ուրիշն ես իւր նման մարզ է և իրաւունք ունի իւր ունեցածն իրան պահելու և վայելելու, ոչ թէ ուրիշը կազի իւր ինչքին, իրաւունք համարի իրան զրկելու, գոզանալու, ամենենին բանի տեղ չգնելով աշխատասէր մարզի քրտինքը, որով տէր է զառել այն բանին, ինչ որ ունի, այլպիսի մարզին նա պէտք պատուէր նորա ունեցածի հետ միասին, ոչ թէ յափշտակելու գոզանալու աչք ունենար նորա ունեցածի վերայ, Նրանի թէ մարզիկ այսպէս մտածէին, այսպէս անէին։ Քայց, ախ, մեք հակառակն ենք տեսնում շատ ու շատ անգամ ոչ թէ հասակով փարրների մէջ, որոց համար ասէինք թէ՝ ինչ որ անումէ, խելքը չէ հասնում, այլ ցաւ է ասել, մեծերը կատարեալ մարզիկը՝ հասակն առած մարզիկն են այլպիսի վատ գործերի տէրը, ու չեն ամաշում իրանց քրիստոնեայ ճանաչելը, որ քրիստոնէի գործից շատ հեռու են, և այլպիսի մարզիկն իրանց վրայ գիռ ևս այնպիսի կարծիք ունեն, որ լու կրթութիւն են ստացել, լաւ մեծացել, բան տեսած մարզիկ են, բան են կարգացել, բան սովորել, ուսումից տկար չեն, և այնպիսի մարզիկ են, որոց կեանքը տանը մէջ և իրանց նման մարզիկների հետ ունեցած նիստ

ու կացը աեսնողը կհաւանի, և բազմութեան մէջ խելոք, սուր, ձեռքից քան եկող, շատ բանի խելք հասցնող են ճանաչվում, ընդունվում և շատ պատիւ ունենում: այդպիսի մարդիկն ինչքան որ արժանաւոր մարդիկներ են ճանաչվում, բայց և այնպէս անարժան ու խարերայ մարդիկներ են: ոչ մի բանով պակաս չեն վատ մարդիկներից, եթէ նոցանից ևս անց չլինին: Այդ տեսակ մարդիկ աղքատի կամ ողորմութիւն հաւաքողի պէս կտրտած, պատուած չեն ման գալիս ու չունեռութիւնից, նեղութիւնից յուսահատուած ու հարկազրուած գողութիւն չեն անում: դոքայ որ տեղ ես տեսնեո, օրինաւոր կերպով հագնուած են. դոքա իրանց անպատիւ խարերայութիւնն ու խարդախութիւնը, որով ապրում են, ծածկում են վարպետութիւնով, իրանց գլուխը պատւաւոր ու մարդավարի մարդիկ ցոյց տալով. մինչեւ անգամ շատ ժամ՝ գնացողները, բարեպաշտներն ու ջերմեռանդներն են դոքա. զոցա աղօթք անելը զարմացնում շատերին. բացի դորանից մարդի մէջ ևս ամենի հետ այնպէս են, որ կասես թէ՝ զոցանից ել պատուական մարդիկ, զոցանից ել մարդիս Ճշմարիտ բարեկամ մարդիկ գժուար թէ գտնել կարելի լինի. բայց որ լւա մտիկ ես տալիս զոցա վերայ տեսնուումս որ՝ տակնահանց միայն իրանց փողին են ծառայում և իրանց վարպետ գողութիւնով, իրանց ընկերին խարելովը, իրանց ցած գործերովը քանի գնումեն, հարստանումն: Այսպիսի մարդիկն են դուրսից լաւ ճերմակացուցած ու աչքի սիրունիկ երեկոնդ զերեղմաններն, որոց համար ասումէ Քրիստոս, թէ դուրսից դիւր են գալի տեսնողին, բայց ներսի կողմը, մէջը լի են մեռելի ոսկորտանքով և ամեն զգուելի հոտած փառածով:

Պատճառ որ միայն նա չէ աւազակը, որ մի յետ ընկած տեղ, մարդի ոտք շատ անգամ ման չեկած փողոցում կամ ճանապարհում վրայ է ընկնում ու կողոպտում. միայն նա չէ դող աւազակ, որ գիշերը քոտունդ է մտնում և չարագործ խորամնգութիւնով քո ամենալաւ կահ ու կարասիքդ տանում. ուրիշ տեսակ գող աւազակներ ել կան, որ ուրիշ ճանապարհներով, ուրիշ ցածութիւններով շատ տեղ իրանց արածն անումն: խորամնդ ու խարդախ հնարներով իրանց նման մարդի ունեցածին կալում են:

Կարծիք չկայ, որ ուրիշի ունեցածին վնաս տալ է, եթէ մի քըրիստոնեայ իւր նման քրիստոնէի առուտուրի մէջ խարդախութիւն ու խորամնկութիւն բանեցնելով խարումէ, ուղիղ կշիռ չէ պահում, լաւ ապրանքի տեղ վատն է տալիս, հետը պայման կապած ժամանակ ցածութիւն է անում և հնարներով իւր շահն է մտքումն ունենում միայն, իսկ ուրիշի վնաս քաշելը ամենեին բանի տեղ չէ համարում, իրան հաւատալով յանձնած կամ պահ տուած կամ իրան փոխ տուած կայքը կամ փողն ուտում, փշացնումէ կամ վտանգաւոր գործերի մէջ մտնում ուրիշի փողով և այն միամիտ մարդիկներին, որ իրան հաւատացել էին ու իրանց ունեցածը ձեռքը տուել, մեծ մեծ վնասներ է տալիս

կամ սուտ ցոյց տալով՝ որ ամեն բան ձեռքիցը գնաց, կորցրեց, ուղենալով սնանկանում ու նոր հարստութիւն ձեռք րերում, աւելի բանի տեր դառնում։ Այստեղ տարրերութիւնը միայն այնքան է, որ գողութիւնն ու աւազակութիւնը համարվում է անյաջողակ առուտուրի հետեւանք, այստեղ աւազակութիւնը այնչափ վատ չէ թուում մարդիս, այստեղ գող աւազակի լրբութիւնը չէ երևում։ որովհետեւ կարծվում է որ նա մեղաւոր չէ, անյաջողութեան մէջ է ընկել, ձեռքն եղած չեղածը կորցրել։

Դոյնպէս ուրիշի ունեցածին վեաս տալ է, եթէ թուղթ խաղացողը, որոյ աչքը ուրիշի փողի վրայ է, որ իւր զրպանը զնի, գ մուռէ թուղթը կոչ վ-ի-շ դ-ո-ւ-ր ա-+ա-շ-ն-ո-ւ-մ, որ նորու կոշուի։ Այդպիսի մարդի համար թուղթ խաղալը ծանր գործերից յետոյ հանգստանալու համար ժամանակ անց կացնել չէ, այլ այդ և այդպիսի անողիտան, անարժան մարդիկների համար փող աշխատելու մի ցած միջոց է, մի վատ ճանապարհ է ։ Կա լաւ զիտէ իրան արդարացնելը ու կարողանում ասել թէ՝ ես էլ իմ ունեցածս մէջ տեղ եմ զնում ուրիշի նման, բաղդի բան է, կամ ես նորա ունեցածը կտանեմ, կամ նա իմս, իսկ եթէ իմ բազոս է բան անում, ես եմ տանում, ես ի՞նչ մեղաւոր եմ։ Բայց նա իւր բանը լսու զիտէ, իւր ամեն վարպետութիւնները, իւր ամենայն հնարները, իւր ամենայն խարդախութիւնները բանեցնում, ինչպէս որ պէտք է, ուրիշին չոր քարի վրայ նստեցնելու համար, Գիշերուայ գողն էլ կարող էր տանց քաշուելու ասել թէ՝ սիրտ եմ անում գողութիւն անելու բայց եթէ բռնուիմ՝ իմ ունեցած չունեցածիս տէրն այլ ևս չեմ լինիլ, մինչեւ անգամ աղատութիւնից ևս կզրկուիմ ու կեանքս ևս կերթայ։ ահա այսպիսի բան է ուրիշի ունեցածին կացելու սիրտ անելը. բայց դա ևս իւր բանը զիտէ ու վատահ է իւր խորամանկութեան վրայ, երբ որ իւր անարդ գործի մէջն է։

Ուրիշի ունեցածին վեաս տալ է, եթէ ուրիշի փողի, կայքի վրայ աչք ունեցող մարդն իւր նման մարդին երբ տեսնում թէ՝ երկարի գնալու չէ, շուտով մեռնելու է սաստիկ մօտենում, ամեն կերպով իրան սրտացաւ բարեկամ ցոյց տալով, ինչ է որ նոր օրն ուր ժողովներին հեռացի, իւրեանց ունեցած իրաւունքից զրկել տոյ և իւր ձեռքը ձգի այն սեղչականութիւնը, որ ուրիշներին պէտք էր հասներ, Խարերայ ու խորամանգ անպիտանը ամենայն հնարք բանեցրեց, որ իւր զլուխը ցոյց տոյ թէ՛ այն ամենասիրելի առաքինութեան տէրն է, որ հորտուր հա-հա-ի-ս-ս-ո-ւ-ն է ասվում, և այդպէսով անմեղ ու արդար ժառանգների ձեռքից խլեց ժառանգութեան իրաւունքը։ Այդ տեսակ մարդը մեռնողի ձեռքով կողոպտում օրինաւոր ժառանգներին, որոց հեռացնել է տալիս բոլորովին՝ ժառանգ ճանաչել չտալով, նա օտար է համարել տալիս արիւնակից աղքականներին և իւր այս ամօթալի արարմունքին պատրաստակամ ծառայութեան կերպարանք է տալիս, Խորամանդ և նենգաւոր

չարախնդացութիւնով խոփումք թէ մեսնողին և թէ ապրողներին.. նո
խելօքութիւն է անուանում այն, ինչ որ գողի ու աւազակի գործ էր,
նո ինքն իրան ևս չի մռաւանալ, իրան վրայ ևս մատածել, ինքն իրան ևս
զրկել է անուանում այն, ինչ որ իրրե միջոց գործ ածեց ուրիշին հան-
նելու բանը իրան սեղչականելու, իւր տակը քաշելով:

Արիշի ունեցակի վեսա տալ է, եթէ մազձառ չարախնդառներն իւնե-
ցանուացներէ բարի անունը էւորունէն, իւուն էւունուանուի ունի յէսուն, էւունուանու վա-
նու էւուն աշխատումն իրանց կողմից ևս նորա վրայ վատ լուրեր տարածե-
լու, և թէթեամութիւնով ուրախունումն ամենայն բանի վրայ, ինչ որ
պատումն նորա վրայ ասելու, ինչ որ իրանց նման մարզի խելքին, բնու-
թեան ու վարքին պակասութիւն կարող է բերել, Մի՞թէ մարզիս բարի
անունը, ունեցած պատիւը իւր քաղաքի մէջ, ունեցած լաւ համարումն
իւր ունեցած հարստութիւնից, կոյքից պակաս մած բան է, որին պէտքէ
խելքել ու չկայշել, չէ. Մարզիս բարի անունն ու ունեցած պատիւը մի՞-
թէ աւելի մեծ գին չունի իւր ունեցած փողից, թանկագին կարախքից ու
զարդերից և անշարժ կայքից: Ամեն մի չար մորով ասած խօսք, որով
կատրումէք գուք ձեր քաղաքացու անունը վայր էք ձգում նորա պա-
տիւը, ամեն մի նորա ու նորա ընտանիքի պատուին կայշելու կարծիք, որ
նենցուուք մորով տարածումէք նոցա վրայ, ամեն մի բամբասանք և ու-
րիշների խօսածներին նայելով՝ ձեր կողմից ևս օգնելը վատ կարծիք, որ
կասկածունք նոցա վրայ տարածելու, նոցա անունը արատաւորող մի
պատմութիւն շատ տեղ անելը մի՞թէ գողութեան ու աւազուկութեան
պէս բան չէ, որովհետեւ կողչումէ մարզիս այն կողմերին, որ նորա համար
շատ սուրբ շատ թանկացին բան է. Նորա մարզկային արքանաւորութիւնն
է, որ գուք ոչնչացնումէք: Մարզիս պատիւը կոտրելը մի՞թէ աւելի մեծ
ցաւ չէ տալիս նոցա որտին, քան թէ նոցա ունեցած չունեցածը ձեռքից
խլելը, որ համարակ գողի ու աւազակի գործ է: Գողը իւր քաղաքացիների
գոներն է բացում յարմարացրած բանալիներով, զրպարտողն ևս՝
խկն ու ճշմարիտը չխօսելով մի մարզի վրայ, սուտ լեզու բանեցնելով,
մեացնումէ նորա բարի համբաւը գողը, տանելք որ՝ իւր գողացածովը կա-
րող է գեռ ևս լաւ ուտել, լաւ խմել, ուրախութիւններ անել, ճաշեր
սարբել, ծախսեր անել, մի խօսքով, իւր սրտի ուղած շատ վոյելու-
թիւնները քաշել, փող չխնայելով. գու, որ ձեռքիցդ եկածը ամենեին
յիւտ չես ձգում, քո հարեանիդ (զրացիիդ) վրայ ասուած վատ խօսքը,
որով նորա վրայ կեղտ է քսվում, ամեն տեղ փոելով, ասու ինձ, ինչ
է ընկնում, քո ձեռքդ և գու ի՞նչ ուրախութիւններ ես անում, ի՞նչ
վայելութիւններ ես քաշում, իրը որ մինը ոչ միայն ուրիշների, ոյլ և
քո մունաւոր չար լեզուին ևս մատաղ է լինում, անունը սեանալով.

Արիշի ունեցածին կայշել ու վեսա տալ է, եթէ մարզիկ իւրեանց
նման մարզիկների ետեկից ընկնումն ու ամեն կերպ աշխատում, որ նոցա
պատմութիւնն արշափ կարելի է, պակասացնեն, փոքրացնեն կամ

մինչեւ անգամ ոչնչացնեն, որ լինեաւ էրանց ոչըուը չե դահուահ, որ էրանցնչ լուն. սյսպէս արհեստաւորները նախանձելով իրանց արհեստակցին՝ նորա ստացած լուս աշխատածւմն կռորել, վաճառականներն ամեն ջանք անում, որ պատւաւոր ու անխարզախ ճանաչուած վաճառականի ստացած հաստաբերութիւնը նորա վրայից պակասեցնեն, կան մարզիկ, որ զիտութիւնով ու առաքինութիւններով երևելի անուն ունեցող մարզին պյանգէս են անում, որ նորա ունեցած այդ պատուական արժանաւորութիւններն ամենենին բանի տեղ անց շկնառ և մինչեւ անգամ անարժան ու անպիտան մարզ համարուի, Մեր ընկերի, մեզ նման մարզի՝ լաւ անուն, Էւս պատիւ, լաւ զրութիւն ու վիճակ ունենալուն վրայ նախանձելու սիրտներս շտանելն ու մեզ վատ թուելն նորանիցն է, որ մեր սիրտը վատ է, ազնիւ ու բարի զգացմունքը բոլորովին կորցրել է, որովհետեւ նախանձող մարզը իւր գժոխային նենդ մաքովը ոչ միայն չէ կարում տանել իւր նման մարզին, որ բաղպաւոր է, այլ գոհ չէ վերին Տեսչութեան անօրէնութիւնից, որ իւր նման մարզի գործը յաջող է, Նախանձողը համարձակումէ ուրիշների արժանաւորութիւնը Աստուածանից աւելի խիստ քննելու ու գատելու, պատճառ որ՝ մեր ամենազէտ Տէրը երկայնամիտ է ու համբերող, իսկ չկամ մարզը կուրանումէ իւր նախանձից ու շտապ և խիստ գատաստան է անում իւր նման մարզի վրայ վրէժինդրութիւն ցոյց տուող հոգւով՝ Նախանձից յառաջ եկած ամենայն ջանք ու աշխատութիւն միշտ չար է, Աւազակ է այն մարզը, որ ցանկանումէ ոչնչացնել իւր նման մարզի այն հաւատարմութիւնը մի հասարակութեան մէջ, որ նա վայելումէ իւր աշխատութիւնովը ունեցած յաջողութիւնովը ու խոչհմանութիւնովը այս աւազակ է այնպիսի մարզը որ ուզումէ վիացնել նորա համբաւը, որ նորա ունեցած պատիւն ու անունը իրան լինիւ Խոչով է նա զանազանվում գողից, Երկուսի բռնած ճանապարհն ևս Երկուսի գործն ևս անպատի ճանապարհ է ու ցած գործ, Աւազակը, գողը յափշտակումէ զողանումէ մարզից այն, ինչ որ նորա աշխատասիրութեան վարձն է, ինչ որ նորա կատարած գործերի պառողն է, Իսկ ուրիշի հացին նախանձողը փակումէ իւր նման մարզի աշխատանքի օրինաւոր ճանապարհները, կոտրումէ նորա անունն ու ունեցած հաւատարմութիւնը:

Արիշի ունեցածին վետու տալ է, եթէ մի մարզ որին առէնցնելը հաստիքացն է՝ յետը յանցնել էրեւաց կոյն ու ինչը՝ վոր է իւսուցըրած, երբ որ սրբերի և այրիների կայքը ցած ճանապարհներով տակն է քաշում՝ կամ անհոգութիւնով այն զրութեանն է հասցնում, որ փշանումէ, եթէ պաշտօնեաները բարեգործական հաստատութիւնների ինքը աններելի նպատակների համար են գործ գնում, եթէ նորա անչափահասի ունեցած եկամուտները, որ իրանց կառավարութեանն է յանձնուած, իրանց օգտին են աշխատում բանեցնելու կամ մեծ ճաշեր տալու վրայ են փշացնում:

Այ անմուանալի բարերարներ, որ բարեզօքձական ու հասարակոգուաչառատառութիւնների համար կոտակներ ե.ք արել ու մեծ մեծ զումարներ կամ կարւածներ թողել՝ կարողանացիք ձեր զերեզմանից վեր կենալ ու աեսնել, թէ ինչպէս փոշու նման, որ քամին փշում տանումէ: վառնք-դումն ձեր թողածները ինչպէս արդեօք դառնացած սրտով երեսներդ շուռ կապահիք, որ աշքներդ շտեսնի պյն անխղճտուանիք մարզիկներին: որ փչացնուան արտասուը թափող, անտէր անտիրական աղքատների համար ձեր նուրիածը, որ նորանց ձեռքն է յանձնուած լու պահպանելու և կառաջարելու: Աարողանացիք ձեր զերեզմանից վեր կենալ, այ առարինի հայրեր, ու մայրեր, որ ձեր որր մեացող մանր զաւակներին կարծեցիք թէ խղճաւանիք ունեցող մարզիկների խնամքին ու հոգացնզութեանն ե.ք յանձնուած: Ինչպէս արդեօք պէտքէ ցաւէիք ձեր մահուանից յետոյ մացած ձեր սիրեկան զաւակներին անմիսիթար վիշտակի մէջ տեսնելով: — Այն կեղծաւոր խարդախները չեն ամաչուած բերան բերել ուսու խօսքերը թէ՝ պէտք է: պարտականութիւն է ողորմէ այրիներին ու որրերին: զումն ու խնամքունենալ նորանց վրայ: բայց չեն ասու մթէ՝ ողորմէիների համար կոտակածն իրանց անմաքուր ձեռքն է տուած: այնողիսի մարզիկը բարեզօքձական հաստատութիւնների հիմնադիրների Աիշատակներ են կատարուած: Ֆոշչեր տալիս, որ եկամուաներիցն այդ առիթով ձեռքները բան ձգեն: աղքատների: որբերի: այրիների համար թողածն իրանց քաշելով: Այդպիսի մարզիկն են, որ աւազակների նման ոչ միայն աղքատներին, ոյլ և մեռելներին ևս կողոպտումեն: Ա, այ ձեզ, կզայ ձեզ հաղ համար պյն սկ օրը: որ ձեր ամենալի արարմունքները երեան կհանուի՞ն,

Այսպէս կան շատ ուրիշ ֆանազպարհներ ես: որով ուրիշի ունեցածին վկաս են հասցնուած: Այս ով է կարող պյն տեսակ տեսակ անօրինակ մանապարհներն մի մի թուել, որով անիրաւաբար կազումեն ուրիշի ունեցածին: Ես այդ բանը վիզ չեմ առնիլ: Այդպիսի արարմունքը մարզիս սիրու վրզովում: Մաքուր սրտի տէր մարզը այդպիսի զարշելի զործեր տեսներով՝ իրան օտար է համարուած: այս աշխարհիս երեսին և ցաւով սրտի հարցնուած: թէ՝ մարզիկների մէջ եմ ապրում ես, թէ վայրենի գաղանների մէջ,

Պատուելի մարդ լինելը զեռ ես մի արագինութիւնչէ: բայց ե չէ կարող մի մարդ իրան գրիստանեայ անունը տալ: ասունց իւր պատիւը իմացող մարդ ճանաչուելու: իւր զիսի պատիւը ճանաչելը ու պատուելի մարդ լինելը զեռ ես առաքինութիւն չէ, այլ միայն չարագործութիւն չանել է: Պատճառ որ իւր պատիւ ճանաչող ու պատուելի է ամեն մի մարդ, որ կամք չունի ուրիշին զրկելու: կողոպելու: խարելու: իւր պատիւ ճանաչող ու պատուելի մարդ է նա: ով որ ոչ ոքին վկաս չէ տալիս, ոչ ոքի պատուին: անունին չէ կողչում: Զար զործերի տէր մարդ շլինելով միայն: մարզս ազնիւ քրիստոնեայ զեռ ես չէ: Ինչ մեծ բան է.ք առում: ասումէ Յիսուս: երբ որ ձեր եղբայրների հետ բարեկամաբար

և բ վարժում է նրանց ոչ մի վատութիւն չեք անում, և կը անսահան կը
աղիք չե՞ն անում արգելու:

Իսյց ու րիշների սեպհականութիւնը կատալարելու մը մարզիս ունեցած
բարեխղձութիւնը (Խղճմանքով շարժ զալ) ուրիշի ունեցած բնչքն
ու իրաւունքը յարգելը ամեն առարինութիւնների անպայման հիմն է, ա-
ռանց զրունական նման մարզիկների վրոյ ուր ունենալը, դորձով բա-
րեսիրա լինելը կարծելու բան չէ մի մարզի վրոյ:

Այսօնն մարդիկների հետ ունեցած վարժունքին ու ամեն զործերիս ա-
ռաջին ու զիսաւոր օրենքը լինի առրէն առեցոնք գոյց բարի ոչով նայեն, առ-
րէն առպատճեան բեռն իուլյուս + + լուսն Արիշների ունեցած իրաւունքը ինձ
համար ամեն ժամանակ մի որբաւթեան նման բան լինի. Մինչեւ անզամ
նեղութեան ու կարառութեան մեջ եղած ժամանակու մինչեւ անզամ ոյն
անտանելի օրերում որ իմ ընտանիքին հետ զառն զիհնակի մեջ եմ
զանգում ու աղասուելու ձարը չկայ. եմէ որ այց զրութեանս մեջ
խելքս լսու հասնի որ մի որ եցից անրդարութիւն անելով՝ կարող եմ
ազատութիւն կամ մի խարեւութիւն զործ զնելով՝ կարող եմ հարստու-
թեան ուր զանալ — անհծուի ոյն միաբար, որ իմ մեջս ոկտար է ջնի և
որ ինձ այլպիսի ամօթափի զործերի որբար է տանի՛. Ասելի լուս է մոծ նե-
զութիւնների մեջ տապակութմ, քան մէկ իմ ընչառութութիւնով աշ-
խարհիս. Վրոյ առելի նեղութիւններ, ցաւեր առելցնեմ. Ասելի լուս է ես
արտասուր թափեմ. քան մէկ ժամանութիւնով՝ զրովարանութիւնով՝ չա-
րահնողութիւնով ուրիշներին զռուվ լացացնեմ. Աղքատ լինիմ լուս է,
քան մէկ խորամանկութիւնով ու խարդախութիւնով երբ և իցկ ուրիշի
ունեցածի մի չնչին մասն ինձ սեպհականացնեմ. Իմ մխիթարութիւնն
ինի արգար զործը իմ հարստութիւնս լինի իմ մաքուր սիրտը, իմ
յուրու լինի Ապառն ծոյ որհնութիւնը:

Քրիստոնեայ հոյր քրիստոնեոյ մայր, քո զաւակներիդ մորի ու սրտի
մեջ զիս ևս իրան շատ վորք հասակում տպաւորիր յորդէն առրէն առեցոնք. Այսզ ձեր տուած խրատը իրանց սրտումը տպաւած ամենասուրը
տպաւուրանը լինի՛. Առանց խառյելու որումիր նորանց իրանց ամեն մի
ոյն հականեկը համար որով կամ խորամանզութիւնով կամ բռնու-
թիւն բանցնելով՝ ուզումն մի բան իրանց սեպհականացնել. որ իրա-
ւունք չառնեն կամ ուրիշ ունեցածին չարասրաւութիւնով ուզումն
վես հասցնել. Մինչեւ անզամ նոցա ամենափորբիկ անրդար բան անելը
որ տեսնեա. մէկ երեխայտկան կամակորութիւնով արտծ լինին անտար-
բեր չմետա. Աչքիդ առաջ լինին ամեն չարագործները, որմէր իրանց անօպա-
տիւ ու անօպտան կեանը թաքրի ու կախաղանի տակը կամ բանտի ու
շվճաների մեջ վերջացրին. Միշտ մարիդ լինի. որ այն սղորմելի անրազդ-
ները երեխայտկան խաղի մեջ սկսեցին երեխայտկան խարդախութիւն բանցները
բայց յեւզոյ զնալով զնալով նորանցից զուրս եկան անտանելի, անամօմ

խարերաներ, իրանց յանձնուած կայքերի ու գումարների անհաւատաբիմ հոգաբարձուներ ու կառավարիչներ, զյժ ու բանութիւն գործ ղնող աւազակներ։ Միշտ մոքումղ լինի, որ կեանքի բաղտաւորութիւնը մի ազնիւ տան հիմք խնայողութիւնն աշխատասիրութիւնն ու քիչով բաւականանալի է, որ ուղիղ սիրտ ունեցող մարզն է աշխարհիս մեջ ամենաշեշտ ու ամենաապահով կերպով ուրիշների հաւատարմութիւնը վասակողը, որ աշխատասիրութիւնով ձեռք բերած կարողութիւնը ամենից երկար է գնում և Աստուծոյ օրհնութիւնը իւր վրայ լինելու կողմանէ չե երկմառում։ Միշտ մոքումղ լինի, որ սաստիկ սպանիչ յուսահատութիւնն անդամ իրաւունք չի տալիս մեզ անարգարութիւն անելու միշտ մոքումղ լինի։ Աստուծած իւր հայրական խնամքով ու բարութիւնով մեզ համար հոգս է անում, ինչ որ մեզ պէտք է, և թէ նորա օգնութիւնը մեզ այն ժամանակ աւելի շուտ կհասնի, երբ որ մեք ամենաաստիկ վախի ու նեղութեան մեջ ենք։

Քանի՞ անգամ և ինչ ինչ ճանապարհներով իմ կեանքիս մեջ փարձով տեսել ու իմացել եմ այս բանը, Երբ որ օգնութիւն գտնելու յոյսս ամեն կողմից կարծես կտրվումքը, Աստուծած մօտ եր ինձ օգնելու, Երբ որ ես ամեն կողմ՞աշքածած միսիթարութիւն էի պտռում, այն ժամանակը նա եկաւ ինձ աղատեց։ Ինչի՞ համար ուրեմն պէտք է զրկիմ ես իմ եղբայրներիս, կամ կողոպտեմ, խլեմ նորանցից այն, ինչ որ մեր ամենի հայրը նրանց պարզեցել է։ Ինչի՞ համար պէտք է իմ սիրտս չվեր առնի տեսնել այն, ինչ որ նորանը ունին նորա կամքովը։ Ինչի՞ համար պէտք է ցանկանամ ես հարստանալ անարգար ստացուածքով, որոյ վրայ Աստուծոյ օրհնութիւնը չկայ, Ի՞նչ օգուտ պէտք է լինի ինձ, եթէ որ բոլոր աշխարհս ևս շահուիմ, երբ որ հոգուս վեսս պէտք է լինի։ Ինչ որ այս աշխարհիս երեսին իրբե երկրաւոր բարիք ձեռք եմ բերել, նորանցից ոչ մի բան չետս տանելու չեմ այն կեանքը. ոչ անունս, ոչ արժանատորութիւնս, ոչ պատւաւոր տեղու ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ ինձք քս ոչ ունեցած իշխանութիւնս։ միայն իմ անհանդիսա խղճմտանքս կմնայ ինձ հաւատալիմ իմ մահուանս միջոցին։ միայն իմ անմահ հոգուս առաքինական զօրութիւնը ինձ չետ կզնայ երկնքի յաւիսենական թագաւորութիւնը։

Հետու լինի ինձանից այն անարժան զորձը, որ ինձանից խարուածների անէքը իմ վրաս կը բեռէ. Հետու լինի ինձանից այն անխղճմտանքութիւնը, որ իմ ձեռքիցս Նեղութիւն քաշած այրու ախու վախը կլսեցնէ ինձ. ինձանից այն ցաւը հետու լինի, որ ինձանից խարուած որբի արտասուրը թրի նման իմ սիրտս կծակի՛ Ոչ մի ժամանակ չլինի իմ անխարգախս աշխատանքով ձեռք բերածիս մեջ ուրիշներին մեջք անելով եկած փողը, որ ինձ անյաջողութիւն ու անբաղդութիւն բերի, իմ խղճմտանքիս աստուածային խաղաղութիւն և իմ տանս վերայ նորա օրհնութիւնը բերելու տեղը։